հետ, սպանեց նորան եւ ստանձնեց կառավարչութիւնն երկրի վերայ։ Փայտակարանի բնակիչք, թողնելով քաղաքը, առաջնորդութեամբ Վարդ ի. Սաֆֆան Սամի (որ Սամ ի. Լիվայի որդիներից մէկն էր) մտան Կիլաբ ամրոցը. նոցա հետ միացան զանազան սրիկաներ եւ այլք։ Մուհամմեդ ի. Սալ նոցա դէմ ուղարկեց Սալհ ի. Սաբիհ Կինդիին, որ պաշարեց ամրոցը եւ սպանեց նոցանից մեծ բազմութիւն։

134 Թ. Աբու Աբբաս նշանակեց իւր եղբայր Ջաֆարին կուսակալ Միջագետքի, Մառուսիլի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։ Ջաֆար դրեց Հասան ի. Քահթաբ Թային Միջագետքի, իսկ Եզիդ ի. Ուսայդ Սուլամիին Հայաստանի վերայ. ապա հեռացրեց վերջինին, նորա փոխարէն նշանակելով Հասան ի. Քահթաբին Հայաստանի վերայ։

141 Թ. Աբու Ջաֆար դրեց Հայաստանի վերայ Եզիդ ի. Ուսայդ Սուլամիին, իսկ Ատրպատականի վերայ՝ Եզիդ ի. Հաթիմ Մուհալլաբին կառավարիչ։ Խազարք արշաւեցին Հայաստան եւ յարձակեցան Եզիդ ի. Ուսայդ Սուլամիի վերայ, որը տեղեկացրեց Աբու Ջաֆարին, թէ Խազարայ թագաւոր Բաս Թարխան մեծ բազմութեամբ նորա վերայ է գալիս, ի փախուստ դարձնելով նորա օգնականին. Աբու Ջաֆար ուղարկեց նորա մօտ Ջաբբայիլ ի. Եահեայ Բաջալեին՝ Ասորիքի, Միջագետքի եւ Մառուսիլի ժողովրդից բաղկացած 20.000 զօրքով։ Խազարք յարձակեցան մուսլիմների վերայ եւ կոտորեցին նոցանից մեծ բազմութիւն, մինչ Ջաբբայիլ եւ Եզիդ ի. Ուսայդ փախստեամբ ազատեցան Խիրս[1]։ Աբու Ջաֆար, լուր առնելով, թէ Խազարք յաղթութիւն են տարել եւ մտել մուսլիմների երկրները, արձակեց 7000 բանտար-

---

1 Ըստ Jakut՝ ամրոց Հայաստանում, Շապարանի ծովի հանդէպ։